ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
**HEAD OF STAFF**
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА**

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
(374 11) 818 506

№________________________

«____» «___________» 2016թ.

<<Մեդիամաքս մեդիաքոմփանի>> ՍՊԸ
<<Banks.am>> կայքի լրագրող Ս.Ստեփանյանին

Հարգելի պարոն Ստեփանյան

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում եմ, որ նշված հարցադրումների համար անհրաժեշտ է դիմել առևտրի բնագավառի պետական լիազոր մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հայաստանի Հանրապետությունում պոլիէթիլենային տոպրակների հսկայական ծավալներով օգտագործումը հանդիսանում է շրջակա միջավայրի աղտոտման պատճառ, ինչի արդյունքում կենդանական, բուսական աշխարհի օբյեկտներին, հողային և ջրային ռեսուրսներին հասցվում են զգալի, հիմնականում անվերականգնելի վնասներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և միջազգային փորձի լավագույն օրինակները, ՀՀ բնապահպանության նախարարությունը նպատակահարմար է գտել առևտրի օբյեկտներում պոլիէթիլենային տոպրակների օգտագործման մասով որոշակի սահմանափակումներ կիրառել՝ արգելելով տոպրակի պատի հաստության 50 միկրոնը չգերազանցող միանգամյա օգտագործման տոպրակների վաճառքը: Այդ նպատակով ոլորտի լիազոր մարմնին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկվել է <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացումներ:

Հարգանքով՝

Խ.Աղաբեկյան

Ա.Վարդանյան
011 818 517